ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 104-Ա « 12 » հունվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
Հ.4867-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Նելլի Գալստյանի լ/ա Խաչատուր Ղալթախչյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2010 թվականի հոկտեմբերի 18-ի հ.4867-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/70971-25 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2010 թվականի հոկտեմբերի 18-ի «Չարենցի փողոցի հ.42 շենքում՝ սեփականության իրավունքով Նելլի Գալստյանին պատկանող հ.31 բնակարանի մի մասի գործառական նշանակությունը հասարակական սահմանելու և բնակելի ֆոնդից հանելու մասին» հ.4867-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1. Չարենցի փողոցի հ.42 շենքում՝ Նելլի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող հ.31 բնակարանի մի մասի (ըստ ներկայացված չափագրության 22.17քմ տարածքի) գործառական նշանակությունն, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների, փոխել և սահմանել որպես հասարակական նշանակության տարածք:»:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի ու Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ